

վայի մը մէջ ըրածին հետ, այսինքն է, անժառանգ ըլլալուն համար՝ իր հողերը թողլու կայսեր: Անշուշտ ըսուած չէ հոս ուրիշ ներքին պատճառ մըն ալ որ հիմնական է, եւ որ դրդած է Կիւրապաղատը՝ վախէն այդ որոշումը առնելու: Հոս ալ Վարդան պատմիչ կ'աւելցնէ իսկոյն. «Ձայս իմացեալ Յովհաննիսի երկեալ...»: Մեզի հասկընալի է թէ ինչո՞ւ «երկեալ» Անիի թագաւորը. որովհետեւ գըտնուած էր նմանօրինակ դէպքի մէջ, ինչպէս երբեմն Դաւիթ Կիւրապաղատ: Ուրիշ պատճառ մը եւս, զոր պատմիչը՝ միակն ըլլալով կը յայտնէ, այն է՝ թէ Յովհաննիսի կը վախնար նաեւ Վրաց Գորգի արքայէն, որ կը նեղէր զինքը: Հոգեբանօրէն անոր ենթարկուած մըն էր Յովհաննիսի եւ չունէր մտքի անկախութիւնը գործելակերպին մէջ. իր դահակալութեան առաջին օրէն վայելած էր պաշտպանութիւնը Գորգիին եւ հետեւաբար անոր հրամանին ու սաստիկ տալ ալ գործած շարունակ:

Անիի արդէն տկար թագաւորութեան համար՝ երկշոտ Յովհաննիսի իսկական դժբախտութիւն մը եղած է արդարեւ: Իր եղբայրը՝ Աշոտ Քաջը, զինուորական տաղանդով օժտուած եւ իբր նկարագիր անձնականութեամբ մ'ալ չեղտուած, պիտի չհասցնէր Անին անդունդի եզերքը, եթէ անոր տեղը դահ բարձրացած ըլլար հօրմէն ետք: Թագի կռիւը տեւեց երկար տարիներ եւ տեղի ունեցան եղբայրասպան պատերազմներ: Աշոտ ալ դիմեց բիւզանդական բանակին, հաւանաբար Տարօնի Կիւրապաղատութեան, որ մերձաւոր հեղինակութիւնը եւ ոյժը կը ներկայացնէր հայ հողին վրայ, օգնութիւն ուղեւոր անկէ, եւ փոխադարձ խոստանալով թերեւս ենթարկուիլ անոր գերիշխանութեան: Վատ էին ժամանակները, բայց եթէ 1020ին Աշոտ թագաւորած ըլլար իսկոյն, դէպքերը ուրիշ ընթացք պիտի առնէին անշուշտ:

Սակայն Անիին անկումը դիւրին չեղաւ այնպէս՝ ինչպէս միւս թագաւորութիւններուն: Ազգը ընդլզեցաւ, դիմադրեց անողոք անարդարութեան դէմ, դաւաճաններու հակառակ կանգնեցաւ հայրենասէրներու խումբ մը, եւ արիւնի ու զիւցազնութիւններու սքանչելի պայքար մը արձանագրեց մեր պատմութիւնը, որ հոս մեր նըպատակէն դուրս կը մնայ, եւ առանձին ուսումնասիրութեան մը նիւթ է, պատմականօրէն վերաքննելի՝ իր ազգային եւ օտար աղբիւրներուն մէջ:

(Վերջ)

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

ՈՍԿԵՏՈՒՓ ՄԸ 1687ԷՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏԻՐ ՆՄՈՅՇ ՄԸ

Քրիստոնէութեան շրջանէն՝ հայկական ոսկերչութեան գործեր շատ հազուադէպ են դժբաղդաբար մեր օրերուն եւ եղածներն ալ մեծ հնութիւն մը չեն ներկայացներ: Նոյնիսկ ոսկի կաղմեր (ոչ ոսկեղօծ) հազիւ երեք հատ ծանօթ են մեզի, որոնցմէ երկուքը իջմիածին կը գտնուին եւ մէկ հատ ալ Յրուսաղէմ: Իսկ բուն ոսկի հնադարեան հայկական իրերու, եկեղեցական թէ աշխարհական՝ հազուադէպօրէն կարելի է հանդիպել:

Քանի մը տարի առաջ՝ անակնկալ առիթը ունեցայ Իւլանտայի Տըպլին մայրաքաղաքին մէջ հնամենի հրեայ ծանօթի մը քով տեսնելու գեղեցկաչէն ոսկի տուփ մը: Նոր ստացուած տուփը ցոյց տուին ինծի հոն կատարած այցելութեանս միջոցին եւ ուղեցին գիտնալ թէ ո՞ր ժողովուրդի արտադրութիւն է եւ ե՞րբ շինուած, քանի որ անոնք կ'անդիտանային տուփին հայկական ծագումը:

Լոնտոնի ուրիշ հրեայ հնամենի մը գնած էին դայն: Ինծի առաջարկուեցաւ գնել բաւական կոկիկ գումարի մը փոխարէն: Դժբաղդաբար զինք բարձր նկատեցի եւ վերջապէս մերժեցի պահանջուած գումարը, թէեւ յետոյ աւելի մեծ գինով մը ծախուեցաւ: Ինծի հայթայթուած էին լաւ լուսանկարներ այս տուփին, թող որ ինքս ալ քանիցս անձամբ քննելու եւ տեսնելու առիթ ունեցայ:

Կը խորհիմ որ մեր ոսկերչական պատմութեան համար արժէքաւոր նպաստ մը պիտի ըլլայ ներկայացնել այս տուփը իր լուսանկարներով եւ փոքր ուսումնասիրութեամբ մը, ու դայն այսպէս հրատարակելով տրամադրել հետաքրքիր ընթերցողներուն եւ գեղարուեստասէրներուն:

Շահեկան է հոս միջանկեալ ըսել որ իմ յաճախակի այցելութիւններու ընթացքին, թէ՛ Լոնտոն եւ թէ Տըպլին, դարձանալիօրէն բազմաթիւ կարեւոր եկեղեցական եւ աշխարհական արժանագործական մեծ ու փոքր, արժէքաւոր հայ հնութիւններ ձեռք բերած եմ: Թէ ինչպէս ատոնք մինչեւ Լոնտոն եւ Տըպլին կը հասնին, որոնց Կ. Պոլիս, Պէյրութ, Աթէնք կամ Յրուսաղէմ հանդիպելը իսկապէս աւելի դժուար է, դժբաղդաբար չեմ կրնար բացատրել, բայց եթէ ա-

նույլ որ Անգլիացիներ եւ Իռլանդացիներ աւելի միջոց եւ առիթ ունին նման բաներ գնելու :

Ինչպէս ըսի, հայկական ոսկի հնութիւններ ցաւալիօրէն քիչ թիւով հասած են մեզի, ոչ թէ անոր համար որ չեն շինուած, այլ պարզապէս այն պատճառաւ որ ոսկի իրերը եղած են զլխաւորաբար գողցուած, կողոպտուած կամ նիւթական դժուարութիւններու եւ կարիքներու առթիւ առաջնակարգ ընտրուածները : Նոյնիսկ նախաքրիստոնէական դարերուն, Հայաստանի աշխարհագրական սահմաններուն մէջ կատարուած պեղումներով, կարեւոր ոսկի գանձեր չեն գտնուած : Ոսկեզրամ իսկ որ պէտք էր հայկական Կիլիկիոյ մէջ կոխուած ըլլար՝ չենք ունեցած : Տիգրան մեծ եւ իր յաջորդները բաւականացած կ'երեւան միայն արծաթ եւ անագապղինձ դրամներ կոխելով : Էջմիածնայ գանձատան մէջ պահուած երկու ոսկի ձեռագրակաղմերէն մին ԺԵ. դարու եւ միւսը ԺԶ. դարու գործեր են, իսկ Երուսաղէմիւնը ԺԸ. դարու սկիզբէն :

Ուրեմն այսքան հազուադէպ պատահած հայկական ոսկեգործեալ իրերու շարքին՝ մեր հոս ներկայացուցած ոսկետուփին կարեւորութիւնը ակներեւ է : Դժբախտաբար տուփին չափերը միայն մօտաւորապէս առած եմ, որ է 12 հրդմ. լայն եւ 14 հրդմ. բարձր : Այդ տուփին ձեւով ունինք արծաթ, ոսկեջրած արծաթ կամ կիտուածադարգ արծաթ տուփեր : Ինծի ծանօթ են երկու հատ հաւաքմանս մէջ, հատ մը Ս. Ղազարու հաւաքման մէջ : Ձանոնք կարելի է խընկաման նկատել կամ հաղորդութեան նշխարատուփ : Գուցէ այդպէս էր մասնաւորաբար այս ոսկետուփը :

Ձեւով ութանկիւն, վրայէն բացուող կափարիչով, տուփը կը կանգնի մօտաւորապէս 4 հրդմ. բարձրութեամբ, ձեռքերը աղօթելու ձեւով միացուցած մարդաձեւ (հաւանաբար պատարագիչը) ոտքերու վրայ :

Տուփը իր ներկայ վիճակին մէջ կատարեալ կերպով հասած է, բացի կափարիչին վերնագոյն մասէն : Ինչպէս որ թիւ 2 նկարը ցոյց կու տայ՝ Հայր Աստուած ամպերուն մէջէն կ'երեւայ, կլորակի մը մէջ, տուփին կափարիչին ներքին կողմէն : Սակայն արտաքին մասը տուփին կափարիչին, ենթարկուած է փոփոխութեան : Այս մասը յաւելում մը կրած է, այսինքն Հայր Աստուած ներկայացնող կլորակին մեծութեամբ կլորակի մը, զարդարուած դալարաթել (չիֆթ իշի) զարդարանքներով եւ ճոխացած մարդարիտներով, որոնք կը շրջապատեն ոսկիի վրայ փորագրուած Ս. Կոյսը, երկու կողմերը «Աստուածածին» սխալագիր յունարէն սղագրութիւններով (նկար թիւ 3) : Ինչպէս որ նկարը ցոյց կու տայ, մարդարիտներէն շատեր արդէն թափեր ինկեր են : Կարելի է ենթադրել որ Ս. Կոյսին այս կլորակը տու-

փին ագուցուած ըլլայ ԺԸ. դարուն եւ նոյնիսկ ԺԹ. դարուն սկիզբը :

Տուփը հարուստ է յիշատակարանով եւ արձանագրութիւններով : Գլխաւոր յիշատակարանը կը գտնենք կափարիչին արտաքին երեսին, ութանկիւն դօտիլ մը պէս շուրջանակի քանդակուած երկաթադիրը, որ կը կարգամ, սղագրուած մասերուն տեղ իմ կողմէս բոլորգիր աւելցնելով : Իւրաքանչիւր տող ութանկեան մէկ երեսը կը ներկայացնէ :

ԱՆՕԹՍ ԱՅՍ Շ(Ի)ՆԵ(Ա)Լ Է ՌՃԼԶ Հ(Ա)Յ(Ո)Յ Թ(Վ)Կ(Ա)ՆԻ
ԳՈՐԾՆ Զ(Ե)Ռ(Օ)Ք ՍԵԴՐԱԿԻ Ի Կ(Ե)Ս(Ա)Ր(Ի)Ա ՔԱՂԱՔԻ
ՈՐ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՍԻԼԻՅՄԱՆԻ
ԹԱԽԹՆ ԱՆՅԱԻ ՕՐՆ ՇԱԲ(Ա)ԹԻ
ՈՐ ՏՕՆՆ ԷՐ ԲԱՐԱՂԱՄՈՒ
ԱՆՏԻՕՔԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ(ԵԱՆ)Ս ՄԵՐՈՒՄ
Տ(ԵԱ)ՌՆ ԵՂԻԱԶԱՐ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)ՍԻ

Հոս նախ նկատի առնենք յիշատակարանը :

Յիշատակարանը մեզի կու տայ ՌՃԼԶ, այսինքն Քրիստոսի 1687 թուականը, յիշելով Սուլթան Սիւլէյմանի դահ բարձրանալը «ՕՐՆ ՇԱԲԱԹԻ» : Յիշուած Սուլթան Սիւլէյման օսմանեան սուլթաններու շարքին երկրորդ կոչուածն է, որ արդարեւ յաջորդեց իր եղբոր, Սուլթան Մահմէտ Դ. Ղազի կոչուածին, որուն օրով սկսաւ Օսմանեան Կայսրութեան քայքայումը : Սիւլէյման դահ բարձրացաւ Հիւսէյն 1099 Մուհարէմ ամսոյն Յին, որ հաւասար է Քրիստոսի 1687 Նոյ. 9ին, երբ աւարտած պէտք է ըլլայ՝ ըստ յիշատակարանին՝ ներկայ ոսկետուփը :

Յիշատակարանը կը յիշէ նաեւ Տեառն Եղիազարի Հայրապետութիւնը, այսինքն Էջմիածնի կաթողիկոս Եղիազար Ա. Այնթապցին, որ դահ բարձրացաւ 1681ին եւ դահակալեց մինչեւ 1691 :

Որո՞ւ համար շինուած էր այս ոսկետուփը : Յաւալիօրէն յիշատակարանը ո'րեւէ ակնարկութիւն չ'ընէր : Սակայն անտարակուսելի կերպով կը վկայէ որ շինուած էր Կեսարիոյ մէջ, գուցէ Կեսարիոյ եկեղեցիներէն կամ վանքերէն մէկուն համար :

Բարեբաղդութիւն է որ ոսկերիչ արուեստագէտը չէ մոռցած իր անունը նշանակել յիշատակարանին մէջ՝ ըսելով «ԱՆՕԹՍ ԱՅՍ ՇԻՆԵԱԼ Է ՌՃԼԶ ՀԱՅՈՅ ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՆ ԶԵՌՕՔ ՍԵԴՐԱԿԻ Ի ԿԵՍԱՐԻԱ ՔԱՂԱՔԻ» : Նշանակելի է որ մեկենաս մը չի յիշուիր, որով ստիպուած ենք խորհիլ որ Կեսարիոյ մէջ Սեդրակ ոսկերիչ 1687 Նոյ. 9ին իրեն համար շինած էր այս բազմածախ տուփը եւ նուիրած եկեղեցիի մը կամ վանքի մը :

Կեսարիոյ համար արծաթ կողքեր պատրաստող ոսկերիչ-արծաթագործներու մասին մենք խօսած ենք, կարելի եղած մանրամաս-

նութեամբ, պատկերազարդ աշխատութեան մը մէջ, որ հրատարակուեցաւ «Հասկ Հայագիտական Տարեգիրք»-ի Ա. տարուան (1948) թուին մէջ, ուր կը յիշէի Կեսարացի արծաթ կողքեր պատրաստող վարպետներ, որպէս արծաթագործ Մալխաս, Շահպազ, Մահտեսի Յակոբ, Մահտեսի Կարապետ, Շահմիր: Ասոնց մէջ, սակայն, Սեդրակ մը չէր յիշուեր: Այսպէս ոսկերիչ վարպետ Սեդրակ Կեսարիայէն նոր յայտնութիւն մը կ'ըլլայ մեզի համար, անուն մը եւս աւելցնելով Կեսարիոյ արծաթագործ-ոսկերիչներու արդէն երկար շարքին:

Սովորականէն աւելի կարող եւ հմուտ ոսկերիչ մըն է Սեդրակ Ի Կեսարիա 1687ին: Ճարտար ու ճաշակաւոր է իր դործը: Նիւթին շարադրութիւնը վարպետօրէն յղացուած, առանց խճողանքի: Նոյն ատեն ըսենք որ պատկերազարդութիւնը եւ զարդաձեւերը, դուցէ լատին, սակայն անտարակոյս եւրոպական են: Տուփին երեսեակներուն վրայ՝ առաջին երեսեակ (նկար թիւ 1) կը ներկայացուի Վերջին Ընթրիքը, որուն տակ երկաթագիր կը կարգացուի «ԱՌԷՔ ԿԵՐԱՅՔ ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ ԵՒ ԱՐԻՆ ԻՄ»: Իսկ ասոր ձախ կողմի երեսեակին վրայ կ'երեւին ՊՕՂՈՍ – ՊԵՏՐՈՍ սուր եւ բանալի բռնած իրենց ձեռքը: Պատկերազարդութիւնը, ինչպէս ըսինք արդէն վերը անցողակի՝ եւրոպական էր, ինչպէս մեծ մասամբ կը դառնէր արծաթ կազմերուն, ԺԷ. դարու մեր ձեռագիրներուն Աւետարաններուն մեծ մասին մէջ: Ոչ ալ հայկական եկեղեցական տարազով ներկայացուած են մօրուսաւոր եւ ձեռքերնին աղօթելու ձեւով միացուցած եկեղեցականները, որոնք տուփին ութը ոտքերուն տեղը բռնած են: Վերջապէս տուփին պատկերաւորութեամբ չունի հայկական ազդեցութիւն: Նոյնիսկ թեւաւոր հրեշտակազուխները, որոնք կը զարդարեն թէ՛ կալարիչը եւ թէ՛ տուփին ոտքերը ներկայացնող մարդաձեւերուն միջոցը, հայկական չեն արուեստով: Տուփին ձեւը, եւ բնականաբար վրայի արծաթազարդութիւնները ցոյց կու տան միայն հայկական դործ մ'ըլլալը:


Մեր արուեստը ԺԷ. դարուն առաջին քառորդէն վերջ ենթարկուեցաւ եւրոպական պատկերազարդութեան արուեստին: Ղազար Բաբերդին եղաւ դրչութեան մէջ նախակարգաւոր եւրոպական պատկերազարդութեան ներմուծման մեր ձեռագիրներուն մէջ: Կան ձեռագիրներ ալ, որոնք ուղղակի օտարներէ մանրանկարուած են: Ոսկանի Շարակնոցին (1664) եւ Աստուածաշունչին (1666-68) հրատարակութենէն ետք՝ այդ ազդեցութիւնը տարածուեցաւ հայ արուեստի ուրիշ արտայայտութեանց մէջ, ինչպէս որմանկարչութեան (Նոր Զուղա, Ամենափրկիչ), փայտափորագրեալ տպագրական նկարներու մէջ (Կ. Պոլիս, Գրիգոր Մարգուանցի, Էւայլն), արծաթագործութեան մէջ (Կեսարիոյ ձեռագրական կողքեր, ԺԷ. դար) եւ այլն: Ասիկա խաթարեց հարազատ հին հայկական արուեստը, եւ անկման շրջան մը



Նկար թիւ 1. – Քրիստոսի 1687 թուականին շինուած ոսկետուփ-գործ ոսկերիչ Սեդրակի



Նկար թիւ 2. - Ոսկետուփին կափարիչը (մերփին երես)



Նկար թիւ 3. - Ոսկետուփին կափարիչը (արտաքին երես)

լաժ ոսկեմետաղով կպցուած : Տուփին ոտքերը ոսկիի տախտակին ձե-
ւաւորման ժամանակ ըստ պահանջուած չըջագծին կտրուած են ըզ-
գուշութեամբ : Այս ձեւով կազմուած է նաեւ կափարիչը եւ ազուց-
ուած տուփին : Իսկ տուփին յատակը ոսկի թիթեղին ձեւաւորումէն
ետք, ոտքերէն վեր, իր տեղը ոսկեմետաղով կպցուած է, աւարտելով
այդպէս տուփը :

Ինչպէս ըսինք, աշխատութիւնը կատարուած է մեծ խնամքով եւ վարպետութեամբ: Մուրճի թեթեւ հարուածներն իսկ երբեմն կըրնան ոսկին ծակել: Ոսկերիչ Սեդրակ կըցած է առանց ոսկին ծակտելու, մրճահարելով կազմել թէ՛ պատկերազօրութիւնը, թէ՛ զարդերը եւ թէ՛ արձանադրութիւնները: Աշխատութիւնը յաջողութեամբ աւարտած է շնորհիւ հայ վարպետին արհեստի հասկողութեան եւ բարձր կարողութեան:

Ոսկետուփը 1687 Նոյեմբեր 9ին շինուել աւարտելէ վերջ՝ չենք
գիտեր թէ ո՞ւր եւ ո՞ր հայկական եկեղեցիի կամ վանքի մէջ պահ-
ուած է : Ոսկետուփին յիշատակարանին մէջ ԲԱՐԱՂԱՄՈՒ ԱՆՏԻՓՐԱ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ յիշատակութիւնը զիս լուծումի մը չի առաջնորդեր
եկեղեցիին կամ վանքին ինքնութեան մասին :

Վերջապէս օր մըն ալ ոսկետուփը կը հեռանայ իր հայ բնավայրէն: Կը վերականգնուի գլխուն յունադիր սկզբնադրերով, Ս. Կոյսի մարդարտաշար ոսկի կտորակով մը: Ո՛վ գիտէ ո՞ր կը տարուի, եւ օր մըն ալ կ'անցնի Լոնտոն հրեայ ծանօթ հնավաճառի մը եւ անկէ ալ Իռլանտայի մայրաքաղաքը Տրալլին՝ ուրիշ հրեայ հնավաճառի մը ձեռքը կ'իյնայ եւ կը ծախուի:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՀԱՅ ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄՈՒԹ ԷԶԵՐԸ

Թէեւ Հայ դրամագիրտութեան ուսումնասիրութիւնը մօտ երեք հարիւր տարուան հնութիւն ունի, պէտք է ընդունինք որ միայն վերջի քսան տարուայ ընթացքին է որ ան առարկայ եղած է լուրջ ուսումնասիրութեան¹։ Շնորհիւ վերջերս կատարուած այս աշխատանքներուն, կրնանք ըսել որ Հայ դրամները եւ Հայ դրամագիրտութիւնը իրենց պատուոյ տեղը սկսած են դրաւել միւս ազգերու դրամներու կողքին։

Կողքին:

Հակառակ այս իրողութեան՝ հայ դրամագիրտութիւնը կոյս հող մըն է դեռ եւ կարօտ քննութեան: Օրինակի համար՝ մեզի դեռ անծանօթ կը մնան բազմաթիւ կարեւոր դրամներ, որոնց դոյութիւնը հաւանական է, բայց զանազան պատճառներով անոնք մէջտեղ չեն ելած եւ չեն ուսումնասիրուած: Կան որոշ դրամներ՝ որ յիշատակելիւս եւ չեն ուսումնասիրուած մէջ, բայց կա՛մ կորսուած եւ կա՛մ ուր ուած են մատենագրութեան մէջ, բայց կա՛մ կորսուած եւ կա՛մ ուր ըլլալնին չի գիտցուիր: Այս դրամները յատուկ կարեւորութիւն կը ստանան՝ երբ անոնցմէ ուրիշ օրինակներ չեն գտնուած:

Այս յօդուածին մէջ պիտի յիշատակենք կարգ մը դրամներ, որոնք դեռ մեզի անծանօթ են եւ նաեւ ուրիշներ՝ որոնք կ'որսուած են։ Եւ զանոնք գտնելու մեր ջանքերը մինչեւ հիմա ապարդիւն եղած են։

Իր երեք Հաղարամեայ դոյուլթեան ընթացքն Հայ օրհորդները
ապրած է իբր անկախ, կիսանկախ եւ ոչ-անկախ ազգ մը։ Այս դա-
րերուն ան ունեցած է բազմաթիւ իշխանութիւններ եւ թագաւո-
րութիւններ որ տիրած են Հայաստանի որոշ մասերուն վրայ։ Ասոնց-
մէ ոմանք եղած են փոքր իշխանութիւններ եւ պարագաներու բեր-
մամբ դրամ չեն կոխած։ Կան շրջաններ ալ, ուր եթէ մեր թագա-
ւորները դրամ կոխել տուած են, բայց անծանօթ մնացած են մեզի
եւ կամ ընաւ չեն ուսումնասիրուած։

Այսպէս, չենք դիտարկում թէ նախ-Աղեքսանդրեան շրջանին հայկական դրամներ կոխուած են թէ ոչ: Շատ կարելի որ այդ շրջանի

1. PAUL Z. BEDOUKIAN, A Survey of Publications on Armenian Numismatics from 1925 to 1963; *Revue des Etudes Arméniennes*, I, 1964, pp. 415-426.